ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 մարտի 2020 թվականի N 28

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային-օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով, 68-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ Վանաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել աճուրդով օտարվող հետևյալ հողամասերի մեկնարկային գները հողի կադաստրային արժեքի չափով

ա) Անհատական բնակարանաշինության համար

1ա.1 Տարոն-4 թաղամաս, Մալաթիայի փողոց թիվ 3/3 հողամաս 0,08հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0109-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 2500 դրամ:

1ա.2 Տարոն-3 Ուկրաինական պողոտա, թիվ 1/3 հողամաս 0.0221հա, կադաստրային ծածկագիր –06-001-0007-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 2500 դրամ:

1ա.3 Տարոն-3 Ուկրաինական պողոտա, թիվ 1/4 հողամաս 0,032հա, կադաստրային ծածկագիր –06-001-0007-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 2500 դրամ:

1ա.4 Տավրոս թաղամաս, 4-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 6/2 հողամաս 0.018174հա, կադաստրային ծածկագիր –06-001-0149-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 2500 դրամ:

1ա.5 Տարոն-4, Ջեյթունի փողոց, թիվ 1/2 հողամաս 0.05132հա, կադաստրային ծածկագիր –06-001-0109-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 2500 դրամ:

1ա.6 Տարոն-4 թաղամաս, Ջեյթունի փողոց, թիվ 3/6 հողամաս 0.078197հա, կադաստրային ծածկագիր –06-001-0109-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 2500 դրամ:

1ա.7 Տավրոս թաղամաս, 22-րդ փողոց, թիվ 7 հողամաս 0.03608հա, կադաստրային ծածկագիր –06-001-0041-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 2000 դրամ:

1ա.8 Տարոն-4 թաղամաս, Սեբաստիայի փողոց, 1-ին նրբանցք, թիվ 19 հողամաս 0,0625հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0115-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 2500 դրամ:

1ա.9 Երևանյան խճուղի թիվ 105/5-7 հողամաս 0,000915հա, կադաստրային ծածկագիր –06-001-0759-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 5000 դրամ:

բ) Հասարակական սպասարկման օբյեկտների կառուցման համար

1բ.1 Հակոբյան փողոց, թիվ 2/10 հողամաս 0.223306հա, կադաստրային ծածկագիր –06-001-0609-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 1640 դրամ:

1բ.2 Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 19-2/1 հողամաս 0,00825հա, կադաստրային ծածկագիր –06-001-0268-ից,

1բ.3 Չոր. Անդրանիկի փողոց, թիվ 1/11-3 հողամաս 0,00444հա, կադաստրային ծածկագիր -06-001-0591-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 6000 դրամ:

1բ.4 Սանկտ Պետերբուրգի փողոց, թիվ 1-5/6 հողամաս, 0.02904հա, կադաստրային ծածկագիր -06-001-0648-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4500 դրամ:

1բ 5 Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-3, թիվ 6/1-4/1 հողամաս, 0.0030հա, կադաստրային ծածկագիր -06-001-0016-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 2500 դրամ:

1բ 6 Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-7, թիվ 7/12-1 հողամաս, 0.0024հա, կադաստրային ծածկագիր -06-001-0040-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 6000 դրամ:

1բ 7 Տարոն-2 ՔՇՀ-7, թիվ 26/1 հողամաս 0,012 հա, կադաստրային ծածկագիր -06-001-0009-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 5000 դրամ:

1բ.8 Տարոն-3 թաղամաս, Տաշիրի խճուղի թիվ 7 հողամաս 0,0399հա, կադաստրային ծածկագիր -06-001-0006-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 5000 դրամ:

1բ.9 Տարոն-3 թաղամաս, Տաշիրի խճուղի, թիվ 7/1 հողամաս 0.011477հա, կադաստրային ծածկագիր -06-001-0006-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 5000 դրամ:

1բ.10 Տարոն-3 թաղամաս, Ուկրաինական պողոտա, թիվ 3/2 հողամաս 0.019867հա, կադաստրային ծածկագիր -06-001-0008-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 5000 դրամ:

1բ.11 Տարոն-4 Բելոռուսների թաղամաս, թիվ 12-1/20 հողամաս 0.009հա, կադաստրային ծածկագիր -06-001-4000-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 3000 դրամ:

1բ.12 Տարոն-4 թաղամաս, Մեքենաշինարարների թիվ 37/4-1 հողամաս 0,0036հա, կադաստրային ծածկագիր -06-001-0109-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 3000 դրամ:

1բ.13 Տարոն-4 թաղամաս, Մեքենաշինարարների թաղամաս, թիվ 41/1-8/1 հողամաս 0.0027հա, կադաստրային ծածկագիր -06-001-0108-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

1բ.14 Նարեկացու փողոց, թիվ 2/5-2 հողամաս 0,02522հա, կադաստրային ծածկագիր -06-001-0313-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 6000 դրամ:

1բ.15 Նարեկացու փողոց, թիվ 2/12 հողամաս, 0,0063հա, կադաստրային ծածկագիր -06-001-0211-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 2500 դրամ:

1բ.16 Նարեկացու փողոց, թիվ 15-1/3-4 հողամաս 0,009հա, կադաստրային ծածկագիր -06-001-0314-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 3000 դրամ:

1բ.17 Աղայան փողոց, թիվ 59/1-6 հողամաս 0,02256հա, կադաստրային ծածկագիր -06-001-0715-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 6000 դրամ:

1բ.18 Ներսիսյան փողոց, թիվ 10/3-5 հողամաս 0,002հա, կադաստրային ծածկագիր -06-001-0738-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 6000 դրամ:

1բ.19 Հակոբյան փողոց, թիվ 1/1-1 հողամաս 0,0719հա, կադաստրային ծածկագիր 06-001-603-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 3000 դրամ:

գ) Ավտոտնակների կառուցման համար

1գ.1 Երևանյան խճուղի , թիվ 141/1-1 հողամաս 0,00487հա, կադաստրային ծածկագիր -06-001-1054-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 3500 դրամ:

1գ.2 Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-3, թիվ 75/6-1 հողամաս 0.0042հա, կադաստրային ծածկագիր -06-001-0011-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 3000 դրամ:

1գ.3 Տարոն-2 ՔՇՀ-3 թիվ 83/6-1 հողամաս 0,0028 հա, կադաստրային ծածկագիր -06-001-0011-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

1գ.4 Տարոն-2 ՔՇՀ-3 թիվ 83/6-1 հողամաս 0,00252հա, կադաստրային ծածկագիր -06-001-0011-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

1գ.5 Տարոն-4 թաղամաս, Բելոռուսների թիվ 12/1-17/1 հողամաս, 0.002677 հա, կադաստրային ծածկագիր -06-001-4000-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

1գ.6 Տարոն-4 թաղամաս, Բելոռուսների թիվ 12/1-17/2 հողամաս, 0.002677 հա, կադաստրային ծածկագիր -06-001-4000-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

1գ.7 Տարոն-4 թաղամաս, Բելոռուսների թիվ 12/1-17/3 հողամաս, 0.00198 հա, կադաստրային ծածկագիր -06-001-4000-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

1գ.8 Տարոն-4 թաղամաս, Բելոռուսների թիվ 19/1-9/4 հողամաս 0,0021հա, կադաստրային ծածկագիր - 06-001-0105-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

1գ.9 Տարոն-4 թաղամաս, Բելոռուսների թիվ 19/1-9/5 հողամաս 0,0021հա, կադաստրային ծածկագիր - 06-001-0105-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

1գ.10 Տարոն-4 թաղամաս, Բելոռուսների թիվ 19/1-9/6 հողամաս 0,0021հա, կադաստրային ծածկագիր - 06-001-0105-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

1գ.11 Տարոն - 4 թաղամաս, Բելոռուսների թիվ 37/8-1 հողամաս 0.0048հա, կադաստրային ծածկագիր - 06-001-0105-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

1գ.12 Տարոն-4 թաղամաս, ԲՀՀ-2 թիվ 60/5-1 հողամաս 0,002հա, կադաստրային ծածկագիր -06-001-0105-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 6000 դրամ:

1գ.13 Շիրակի խճուղի, թիվ 58/37-1 հողամաս 0.0015հա, կադաստրային ծածկագիր -06-001-0145-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

1գ.14 Իսահակյան փողոց, թիվ 21/38 հողամաս 0,0024 հա, կադաստրային ծածկագիր -06-001-0745-ից,

1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 3000 դրամ:

դ) Տնտեսական շինությունների կառուցման համար

1դ.1 Տարոն-4 թաղամաս, Մալաթիայի փողոց, թիվ 2/3-1 հողամաս 0.01256հա, կադաստրային ծածկագիր -06-001-0105-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 3000 դրամ:

ԿՈՂՄ (10)

ԴԵՄ (4)

ՁԵՌՆՊԱՀ (1)

Մ.Ասլանյան

Ա.Փելեշյան

Դ.Հակոբյան

Ա.Ավետյան

Ա.Գրիգորյան

Ս.Ղամբարյան

Հ.Սիմիկյան

Ա.Ափինյան

Դ.Սիմոնյան

Ա.Կարապետյան

Մ.Հովհաննիսյան

Ս.Մելքոնյան

Կ.Բեկչյան

Հ. Մովսիսյան

Ս. Աղաբեկյան

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝


ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԱՐՈՎՅԱՆ

Հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 03.03.2020թ. թիվ Կ-03032020-06-0013 և 11.05.2020թ. թիվ Կ-11052020-06-0076 որոշումները, կադաստրային քարտեզի քաղվածքները և Վանաձոր համայնքի ղեկավարի առաջարկությունն այն մասին, որ կադաստրային քարտեզի և տեղեկագրքերի համաձայն 06-001-0438-0074 և 06-001-0208-0010 ծածկագրերով հողամասները սխալմամբ հաշվառվել է որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված հողամաս և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով՝ Վանաձոր համայնքի ավագանին **որոշում է.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը 06-001-0438-0074 և 06-001-0208-0010 ծածկագրերով հողամասերի՝ նկատմամբ՝ համաձայն կադաստրային քարտեզից քաղվածքների:
2. Վանաձոր համայնքի ղեկավար Մ. Ասլանյանին՝ դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում 06-001-0438-0074 և 06-001-0208-0010 ծածկագրերով հողամասերի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու և սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ
ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամսաթիվ՝ 03/03/2020

Փաստաթղթի N՝ Կ-03032020-06-0013

գաղտնաբառ՝ NW99TRXNWI9R

Հասցեատեր՝

Վանաձորի համայնք

Անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը

Մարզ Լոռի, համայնք Վանաձոր ք. 06-001-0438-0074


Ձեր N 27/02/2020-34-0035 դիմումի հիման վրա վերը նշված անշարժ գույքի նկատմամբ հարուցված իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքերով, քանի որ՝

Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 13-ի N 718-Ն որոշման

06-001-0438-0074 կադաստրային ծածկագրից հողամաս Վանաձոր համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված չէ, ուստի իրավունքի պետական գրանցում կատարելու համար անհրաժեշտ է ներկայացնել Մարզ Լոռի, համայնք Վանաձոր ք.

06-001-0438-0074 կադաստրային ծածկագրով 0.01072 հա մակերեսով հողամասի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր, որի առկայության դեպքում կկատարվի ուսումնասիրություն և իրավունքի պետական գրանցմանը կտրվի համապատասխան ընթացք : Ինչպես նաև տեղեկացնում ենք, որ համաձայն հաշվառման տվյալների մուտքագրման բաժնի կողմից տրված եզրակացության՝ կադաստրային քարտեզի տվյալների համաձայն 06-001-0438-0074 ծածկագրի հողամասը Վանաձոր համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված չէ՝ սուբյեկտը քաղաքացի է:





ՎԱՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 14 ՄԱՅԻՍԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԹԻՎ 34-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԱՐՈՎՅԱՆ

Հիմք ընդունելով Արթուր Հենրիկի Ղամբարյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25032020-06-0041 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ Վանաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքային համայնքի ավագանու 14 մայիսի 2013 թվականի «Գր.Լուսավորչի փողոցի թիվ 52/1-1 մառան հասցեում գտնվող մառանը և դրա զբաղեցրած հողամասը Արթուր Ղամբարյանին վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» թիվ 34-Ա որոշումը՝ 31.05.2013թ. մառանի և հողամասի վարձակալության թիվ 119 պայմանագիրը համարելով լուծված:

ք. Վանաձոր

2013թ/ Երկու հազար տասներեք/ *hundred* « 31. »

Վանաձորի համայնքն, ի դեմս համայնքի ղեկավար Սամվել Դարբինյանի, որի անունից լիազորագրով հանդես է գալիս «Գույքի Կառավարման և Եկամուտների Հավաքագրման» բաժնի պետ Վիկտոր Դարբինյանը, որը գործում է Վանաձորի համայնքի ավագանու 14.05.2013թ թիվ 34-Ա որոշման հիման վրա, մի կողմից, այսուհետ՝ Վարձատու, և Արթուր Ղամբարյանը, այսուհետև՝ Վարձակալ, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց տրամադրել 18.1քմ ընդհանուր մակերեսով հողամասը, որը գտնվում է Գր.Լուսավորչի փողոցի թիվ 52/1-1 մառան հասցեում, և նույն հասցեում 13.04քմ ընդհանուր մակերեսով մառանը (այսուհետ՝ «Օբյեկտ»), /համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի Լոռու տարածքային ստորաբաժանման կողմից տրված 14.03.2013թ. թիվ 06-1447 սեփականության իրավունքի վկայականի/, մառանի սպասարկման և պահպանման նպատակով:

1.2. Վարձատուն երաշխավորում է, որ սույն պայմանագրի 1.1.-ին կետում նշված հողամասը և մառանը վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման, այլ անձանց կառուցապատման իրավունքով տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չեն, վեճի առարկա չեն, արգելանքի տակ չեն գտնվում, համաձայն անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու տարածքային ստորաբաժանման կողմից 29.05.2013թ. տրված թիվ 06-0007 միասնական տեղեկանքի:

1.4. Վարձատուի կողմից տրամադրված հողամասի և մառանի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

2. Պայմանագրի ժամկետը

2.1. Սույն պայմանագրով մառանի և հողամասի վարձակալության ժամկետը սահմանվում է 2013թվականի մայիսի 14-ից մինչև 2023թվականի մայիսի 14-ը /տասը տարի ժամկետով/:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1. Վարձատուն իրավունք ունի.

3.1.1. Վարձակալից պահանջել օբյեկտը և հողամասն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և Օբյեկտի նշանակությանը համապատասխան.

3.1.2. Վարձակալի կողմից վճարների վճարման ժամկետների էական խախտման դեպքում պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը, բայց ոչ ավելի, քան առաջիկա չորս ամսվա համար.

3.2. Վաճառուն պարտավոր է.

3.2.1. Օբյեկտը և հողամասը Վարձակալին հանձնել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում.

3.2.2. Վարձակալին նախազգուշացնել սույն պայմանագրով տրամադրվող Օբյեկտի և հողամասի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին.

3.2.3. Մեկամսյա ժամկետում քննարկել Օբյեկտի նշանակության փոփոխման, ինչպես նաև դրա վերանորոգման և վերասարքավորման հարցերի հետ կապված Վարձակալի դիմումները.

3.2.4. Ոչ ուշ, քան 15 օր առաջ Վարձակալին՝ գրավոր տեղեկացնել Օբյեկտն ազատելու անհրաժեշտության մասին՝ կապված շենքը (կամ Օբյեկտը) հիմնական վերանորոգման ենթարկելու կամ քաղաքաշինական նկատառումներով այն քանդելու, վերագինելու, վերակառուցելու կամ արդիականացնելու վերաբերյալ սահմանված կարգով ընդունված որոշումների հետ.

3.3. Վարձակալն իրավունք ունի.

3.3.1. Պահանջել Վարձատուից իրեն տրամադրելու Օբյեկտին և հողամասին վերաբերող փաստաթղթերը.

3.3.2. Օբյեկտը կահավորել և ձևավորել իր հայեցողությամբ.

3.3.3. Օգտվել Օբյեկտում գտնվող կոմունիկացիոն համակարգերից.

3.3.4. Տեղադրել փականներ Օբյեկտի մուտքի դռան վրա.

3.3.5. Օբյեկտը կամ դրա մի մասը հանձնել ենթավարձակալության՝ Վարձատուի գրավոր համաձայնության հիման վրա.

3.3.6. Հողամասի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս՝ իր ընտրությամբ պահանջելու վաղաժամկետ լուծել պայմանագիրը.

3.3.7. Տնօրինակու վարձակալության իրավունքը փոխանցվելու այլ անձի, ազատորեն ծանուցվողներու այն վարձակալության իրավունքը փոխանցելու այլ անձի՝ համապարփակ իրավահաջորդությամբ փոխանցվելու:

3.3.8. Վարձակալության իրավունքի օտարման դեպքում Օբյեկտի նկատմամբ Վարձակալի ստանձնաբոլոր իրավունքներն ու պարտականություններն անցնում են հողամասի նկատմամբ վարձակալության իրավունք ձեռք բերող անձին:

3.4. Վարձակալը պարտավոր է.

3.4.1. Օբյեկտն օգտագործել բացառապես սույն պայմանագրի պայմաններին և Օբյեկտի նշանակությամբ համապատասխան.

3.4.2. Ժամանակին մուծել Օբյեկտն օգտագործելու համար սույն պայմանագրի 4.1. կետում նախատեսված վճարները (մառանի և հողամասի վարձավճարը).

3.4.3. Վարձակալած Օբյեկտի տարածքներում պահպանել բոլոր այն կանոններն ու նորմերը, որոնք գործում են վարձակալած Օբյեկտի նկատմամբ (մասնավորապես, քաղաքաշինական, սանիտարական, հակահրդեհային նորմերը և այլն), ինչպես նաև կարևորել այդ կանոնների ու նորմերի պահպանումն ապահովելու համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները.

3.4.4. Օբյեկտը և դրան հարող տարածքը պահպանել պատշաճ և օրինակելի սանիտարական ու հակահրդեհային վիճակում, ինչպես նաև մշտապես պատշաճ վիճակում պահպանել Օբյեկտի արտաքին տեսքը և ճակատային մասերը:

3.4.5. Առանց Վարձատուի գրավոր համաձայնության՝ Օբյեկտը կամ նրա մի մասը չհանձնել ենթավարձակալության.

3.4.6. Ժամանակին կատարել վարձակալված Օբյեկտի ընթացիկ վերանորոգումը.

3.4.7. Ապահովել Օբյեկտի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը.

3.4.8. Առանց Վարձատուի գրավոր համաձայնության՝ Օբյեկտում չկատարել փակ և բաց լարանցումներ և չանցկացնել հաղորդակցության ուղիներ, չանել վերանախագծումներ և վերասարքավորումներ: Վարձակալի կողմից Օբյեկտի նախնական տեսքը խեղաթյուրող ինքնակամ վերակառուցումներ, պատերի, միջնապատերի և ծածկերի ամբողջականության խախտում, ցանցերի վերափոխում կամ անցկացում հայտնաբերելու դեպքում դրանք պետք է վերացվեն և տարածքը բերվի իր նախնական տեսքին՝ Վարձակալի հաշվին և Վարձատուի որոշած ժամկետում.

3.4.9. Վարձատուի որոշած ժամկետներում ազատել տարածքները՝ կապված Օբյեկտի (կամ դրա մի մասի) կառուցվածքների (կոնստրուկցիաների) վթարային վիճակի, Օբյեկտը հիմնական վերանորոգման ենթարկելու կամ քաղաքաշինության նկատառումներով այն քանդելու, վերակառուցելու կամ արդիականացնելու հետ.

3.4.10. Վարձատուին անմիջապես տեղեկացնել Օբյեկտի ամեն մի վնասվածքի, վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել (կամ սպառնում է հասցնել) Օբյեկտին, և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վտանգի կանխարգելման համար, ինչպես նաև Օբյեկտը հետագայում քանդելու կամ վնասելու դեմ.

3.4.11. Ապահովել Վարձատուի ներկայացուցիչների անարգել մուտքն Օբյեկտ՝ դրա զննման և ստուգման համար.

3.4.13. Ոչ ուշ, քան 15 օր առաջ Վարձատուին գրավոր տեղեկացնել վարձակալված Օբյեկտի սպասվելիք ազատման մասին՝ կապված ինչպես պայմանագրի ժամկետն ավարտվելու, այնպես էլ իր նախաձեռնությամբ այն վաղաժամկետ դադարեցնելու հետ.

3.4.14. Օբյեկտն ազատելիս այն սարքին վիճակում հանձնել՝ ակտով՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը.

3.4.15. Սահմանված ժամկետում կատարել Վարձատուի կարգադրությունները՝ ուղղված իր գործունեության ընթացքում առաջ այնպիսի իրավիճակների վերացմանը, որոնք վտանգի տակ են դնում Օբյեկտը, իսկ Օբյեկտից դուրս՝ բնապահպանական և սանիտարական իրավիճակը:

4. Պայմանագրով կատարվող վճարներն ու հաշվարկները

4.1. Սույն պայմանագրով վճարները հաշվարկվում են՝ հողամասի 1քմ համար ամսական 24 ՀՀ դրամ վարձավճար, որն ամբողջ հողամասի համար (18.1քմ ընդհանուր մակերես) կազմում է ամսական 434.4/չորս հարյուր երեսունչորս/ ՀՀ դրամ, և օբյեկտի 1քմ համար ամսական 30 ՀՀ դրամ վարձավճար, որն ամբողջ օբյեկտի համար (13.04 քմ ընդհանուր մակերես) կազմում է ամսական 391.2/երեք հարյուր ինսունմեկ/ ՀՀ դրամ, միասին ընդամենը՝ 825.6/ութ հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ ամսական վճարներ:

4.2. Վարձակալը յուրաքանչյուր ամսվա համար վճարները մուծում է մինչև այդ ամսվա վերջը.

4.3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կենտրոնացված կերպով սահմանվող գների, սակագների և վարձաչափերի փոփոխման դեպքում, մասնավորապես, Վանաձորի համայնքի ավագանու կողմից վարձավճարների կամ կառուցապատման վճարների չափերի փոփոխման դեպքում Վարձատուն իրավունք ունի միակողմանիորեն փոխել վճարների չափերը՝ այդ մասին գրավոր ծանուցելով Վարձակալին:

4.4. Վարձակալի կողմից վճարների մուծումն իրականացվում է Վարձատուի հաշվեհամարին փոխանցելու կամ Վարձատուի համապատասխան կազմակերպության աշխատակիցներին կանխիկ գումարով վճարելու միջոցով.

5. Կողմերի համաձայնությամբ կարող են նախատեսվել վճարների՝ օրենքով սահմանված այլ ձևեր կամ դրանց համակցություն:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրի այլ պայմանները խախտելու դեպքում մեղավոր կողմը մյուս կողմին վճարում է տուգանք՝ ամսական վճարների 10 տոկոսի չափով:

5.2. Սույն պայմանագրով սահմանված տուգանքի (տույժի, տուժանքի) մուծումը կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտականությունների կատարումից և խախտումների վերացման պարտականությունից:

5.3. Եթե Վարձակալը պայմանագիրը դադարեցնուց հետո չի վերադարձրել Օբյեկտը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուին իրավունք ունի վճարներ պահանջել կետանցի ամբողջ ժամանակաշրջանի համար: Այդպիսի դեպքերում վճարները վճարվում են կրկնակի չափով: Եթե նման դեպքում վճարված գումարը լիովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

5.4 Վարձատուին պատասխանատվություն չի կրում Օբյեկտի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ նախապես հայտնի են եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալը հայտնաբերեր Օբյեկտը զննելիս:

6. Վարձակալած Օբյեկտի բարելավումները

6.1. Վարձակալած Օբյեկտից Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

6.2. Եթե Վարձակալը իր միջոցների հաշվին և Վարձատուի համաձայնությամբ կատարել է վարձակալած Օբյեկտից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրանց վնաս պատճառելու, ապա սույն պայմանագիրը դադարեցնուց հետո Վարձակալն իրավունք ունի հատուցում ստանալ այդ բարելավումների արժեքի չափով:

6.3. Վարձակալի կողմից առանց Վարձատուի համաձայնության կատարած վարձակալած Օբյեկտից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

6.4. Վարձակալած Օբյեկտի ամորտիզացիոն միջոցների հաշվին կատարած, ինչպես բաժանելի, այնպես էլ անբաժանելի բարելավումները համարվում են Վարձատուի սեփականությունը:

7. Պայմանագրի վաղաժամկետ լուծում

7.1. Սույն պայմանագիրը վաղաժամկետ կարող է լուծվել կողմերի համաձայնությամբ:

7.2. Սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել կողմերից մեկի պահանջով՝ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում:

7.3. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանիորեն հրաժարվել պայմանագրից, եթե մյուս կողմը խախտում է սույն պայմանագրի պայմանները: Այդպիսի դեպքերում սույն պայմանագիրը համարվում է վաղաժամկետ լուծված՝ միակողմանի հրաժարվելու մասին գրավոր ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից:

7.4. Վարձատուին իրավունք ունի նաև միակողմանի հրաժարվել պայմանագրից սույն պայմանագրի 3.2.4. կետում նշված հիմքերի առկայության դեպքում: Այդ դեպքում պայմանագիրը համարվում է վաղաժամկետ լուծված Վարձատուի գրավոր ծանուցումը Վարձակալի կողմից ստանալուց 15 օր հետո:

7.5. Վանաձորի համայնքի ավագանու 14.05.2013թ թիվ 34-Ա որոշման բոլոր պայմանները չկատարելու դեպքում սույն պայմանագիրը համարել ուժը կորցրած:

8. Հատուկ պայմաններ

8.1. Պայմանագրի գործողությունը կարող է դադարել կողմերի համաձայնությամբ՝ ցանկացած այլ ժամկետում:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները կողմերը քննարկում են մեկամսյա ժամկետում և ձևակերպում լրացուցիչ համաձայնագրերով:

8.3. Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

8.4. Այլ հատուկ պայմաններ _____:

9. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱՃՈՐ)

9. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որ կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական կամ առօրյա առօրյա ռազմական գործողությունները, համաճարակը, պատերազմը, ռազմական կամ առօրյա առօրյա ռազմական գործողությունները, համաճարակը, պատերազմը, ռազմական կամ առօրյա առօրյա ռազմական գործողությունները:

Գործարարական, առևտրական գործունեության սուբյեկտները աշխատանքը դադարեցնում, պետական մարմինների ակտերը, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրն՝ այդ մասին տեղյակ պահելով մյուս կողմին:

10. Եզրափակիչ դրույթներ

10.1. Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ պետական գրանցման 30-օրյա ժամկետից ոչ ուշ:

10.2. Սույն պայմանագիրը կնքելու, ձևակերպելու, վավերացնելու և գրանցելու հետ կապված բոլոր ծախսերի համար վճարում է Վանաձոր:

10.3 Սույն պայմանագիրը կնքված է հինգ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

10.4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՎԱՐՉԱՏՈՒ

ՎԱՐՉԱԿԱԼ

Վանաձորի համայնք.

ք.Վանաձոր, Հայքի հրապարակ

Վանաձորի գանձապետական բաժանմունք

գ/վ 900235401123, հ/վ 900235401107

Լիազոր անձ՝ Վ.ԴԱՐԲԻՆՅԱՆ

Արթուր Հենրիկի Ղամբարյան

Մյասնիկյան Յնրբ. քիվ Յտուն

անձնագիր՝ 018/AK 0406720

հեռ.՝ 40245, 94/730019

ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎՐԱ

Երկու հազար տասներեք թվականի Մայիսի « 31 »

սույն պայմանագիրը վավերացված է իմ «Վանաձոր» նոտարական

տարածքի նոտար Մուսանյան ըմ կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:

Կողմերի, նրանց լիազոր ներկայացուցիչների ինքնությունը, նրանց գործունակությունը և /կամ/ իրավունակությունը ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում N 2148 -ով

Գրանցված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն

ՀՀ «Պետական տուրքի մասին» և ՀՀ «Նոտարիատի մասին» օրենքների:

Ն ո տ ա ր՝ _____





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2020 թվականի N 726

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՐ.ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 52/1-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԹՈՒՐ
ՀԵՆՐԻԿԻ ՂԱՄՔԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՄԱՌԱՆԻՆ
ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Հիմք ընդունելով Արթուր Հենրիկի Ղամբարյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների
պետական գրանցման թիվ 05062013-06-0022 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության
2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ)
ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Գր.Լուսավորիչ փողոցի թիվ 52/1-1 հասցեում գտնվող Արթուր Հենրիկի
Ղամբարյանին վարձակալության իրավունքով տրամադրված մառանին տրամադրել նոր փոստային
հասցե՝ ք. Վանաձոր, Մ.Գոշի փողոց, թիվ 52/1-1 մառան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

Ճիշտ է՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ



Ա.ՕՀԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, vanadzorcity@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2013 թվականի N 34-Ա

ԳՐ.ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 52/1-1 ՄԱՌԱՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՌԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Ղամբարյանի դիմումը, Վանաձորի համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14032013-06-1447 վկայականը, քաղաքապետարանի ճարտարապետական խորհրդի 03.12.2012թ. թիվ 19 արձանագրությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ և 48.1-րդ հոդվածի 6-րդ, 8-րդ մասերով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2004թ. թիվ 286 որոշման 46.2 հոդվածի ա/ ենթակետով, ՀՀ կառավարության 2005թ. նոյեմբերի 24-ի թիվ 2093-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին 28.03.2013թ. թիվ 276-Ն որոշումով՝

Վանաձորի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Տալ համաձայնություն Գր.Լուսավորչի փողոցի թիվ 52/1-1 մառան հասցեում գտնվող, Արթուր Ղամբարյանի կողմից կառուցած, Վանաձորի համայնքի սեփականությունը ճանաչված 13.04քմ մակերեսով մառանը և դրա զբաղեցրած, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող 18.1քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձորի համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14032013-06-1447 վկայականի, վարձակալության իրավունքով 10 տարի ժամկետով Արթուր Ղամբարյանին տրամադրելուն՝ մառանի սպասարկման և պահպանման նպատակով:

2. Վանաձորի քաղաքապետարանի աշխատակազմի գույքի կառավարման և եկամուտների հավաքագրման բաժնին՝ Արթուր Ղամբարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 13.04քմ մակերեսով մառանի և դրա զբաղեցրած 18.1քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիր՝ համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 46.1 հոդվածի 8-րդ մասի պահանջների:

ԿՈՂՄ(15)

ԳԵՄ(0)

ՁԵՌՆՊԱՀ(0)

Գ.Քալանթարյան

Ա.Հարությունյան

Ս.Ղամբարյան

Ս.Աղաբեկյան

Ա.Ափինյան

Խ.Վարդանյան

Հ.Մովսիսյան

Ա.Գրիգորյան

Կ.Պառավյան

Վ.Դավիթավյան

Ա.Փելեշյան

Դ.Սիմոնյան

Ս.Հակոբյան

Ա.Խաչատրյան

Ա.Օհանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՄՎԵԼ ԴԱՐԲԻՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ՄԱՐԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՐԱԿՈՒՄԸ

ԿԱՌԱՐԱԿՈՒՄԸ



Կաղապարի կոմպլեքս

Սույն վկայականով հաստատվում է 25 մարտի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման փաստական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒՔՑԵԿՏ(ՆԵՐ)
ՍՐԹՈՒՐ ԴԱՄԲԱՐՑԱՆ ՀԵՆՐԻԿ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՑՔԻ ԳՏՆԱԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ
Մարզ Լոռի, համայնք Վանաձոր ք. Մ. Դոշի փողոց 52/1-1 մասն

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ
Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 05062013-06-0022

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ
Կադաստրային ծածկագիր՝ 06-001-0428 0143
(Մակերեսի չափը (հա)՝ 0,0018)
Նպատակադրված նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը նաև հողատնոցը Քուսնեի կոմունալ տնտեսության
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՈՒՄԱՆՈՒՄԸ ՏՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 25032020-06-0041, գաղտնաբառ՝ AQXNXRUMKSKD

Քաղաքացիական ծառայության օգնականության մարմինը հաստատում է վկայականի օգնականության մարմինը

Էջ 1/2

Տ. ԵՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Ազատական նշանակությունը՝ ընտելի
2) Բնութագրիցը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Ազատական ճանկալիչ	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	06-001-0426-0143-001-000	Ճարտն	13.04 քմ	ԱՄԴԱԿԱՄԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

վարձակալության ժամկետը սահմանված է մինչև 14/05/2023 թ-ը

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Հայկուհի
Պապիկյան

Ձբաղեցրած պաշտոնը՝ Լոռու մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ազնա
ռեգիստր

«ԱՎԱԿԱՄԼ. N 25032020 06-0041, գաղտնաբառ՝ AQXNXRUMKSKD

Փաստաթղթի լուսկապումը և փոփոխությունները կատարվում են ավտոմատ կերպով և համապատասխանում են փաստաթղթի տեղեկություններին

Էջ 2/2



Կարգապ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «14» Մարտի 2013 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

Վանաձոր համայնք

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Վանաձոր ք. Գրիգոր Լուսավորիչ փողոց, 52/1-1 մառան

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Համայնքի ղեկավարի որոշում 27/12/2012թ. թիվ 1571-Ա

4. ՀՈՂԱՍՏԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 06-001-0428-0143

Մակերեսի չափը (հա)՝ 0.00181

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնակելի կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ Բնակելի
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ Կադաստրային
ծածկագիրը

Տեսակը

Մակերեսի Գրանցված իրավունքի տեսակը
չափը

1 06-001-0426-0143-001-000 Վառան

13.04 ք.մ. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Վոլոդյա Հազոյան

գրադեցրած պաշտոնը՝ Լոռի ՏՄ անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի՝ վկայականը
տրամադրող սպասարկման գրասենյակի
Կ.Տ.





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, vanadzorciry@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 դեկտեմբերի 2012 թվականի N 1571-Ա

ԳՐ.ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓԲՂՈՑԻ ԹԻՎ 52/1-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏԱՐԱՐ
ՎԱՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ
ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Գամբարյանի դիմումը, շահագրգիռ ծառայությունների եզրակացությունները, Վանաձորի քաղաքապետարանի ճարտարապետական ինժեռերի 03.12.2012թ. թիվ 19 արձանագրությունը, մանրանի վիճակի վերաբերյալ «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 20.12.2012թ. տրված թիվ ՎՆ1-362/12 եզրակացությունը, «ՄԵԼ ԵՎ ՄԻԼ» ՍՊԸ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերի 1-ին մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի «ա» ենթակետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. - Ճանաչել օրինական Գր.Լուսավորչի փողոցի թիվ 52/1-1 հասցեում գտնվող 18.1քմ կառուցապատված արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188 րդ հոդվածի 5 րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող մատակ, ամանձնացնել դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 18.1քմ մակերեսով հողամաս՝ համաձայն հավելվածի, և նշված գույքի նկատմամբ ճանաչել Վանաձորի համայնքի սեփականության իրավունքը:

2. - Քաղաքապետարանի աշխատակազմի գույքի կառավարման և եկամուտների հավաքագրման բաժնի պետ Վ. Դարբինյանին՝ 5-օրյա ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վանաձորի տարածքային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված մատանի և դրանով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

3. - Քաղաքապետարանի աշխատակազմի ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման բաժնի պետ Բ.Մակաչյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր ստաջարկություն սույն որոշման 1-ին կետում նշված կառույցն իրականացրած անձին կառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:

4. - Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված մատանի փոստային հասցեն՝ Գր.Լուսավորչի փողոց, թիվ 52/1-1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Ճիշտ է
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Գ.ՄԻՍՈՆՅԱՆ



օրինակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 սեպտեմբերի 2018 թվականի N 101

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 49-41/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՂԱՎԱՐԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԶԵՎՈՎ ՀԱՄԼԵՏ ՎԱՀԱՆԻ ՄԱԼՈՒՄՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Համլետ Վահանի Մալումյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13072013-06-0016 և Համլետ Վահանի Մալումյանի անվամբ անշարժ գույք նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 30072014-06-0041 վկայականները, Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 06.08.2013թ. թիվ 850-Ա որոշումից 30.08.2013թ. համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 238 պայմանագիրը, 17.08.2018թ. «Արմեն Ամիրբեկյան» ԱԶ-ի կողմից տրված ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր Լուսավորչի փողոց 49-41/1 տաղավարի (անշարժ գույքի) կառուցապատման իրավունքի շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի) ենթակետով՝ Վանաձոր համայնքի ավագանին **որոշում է.**

1. Վանաձոր քաղաքի Գր.Լուսավորչի փողոցի թիվ 49-41/1 հասցեում գտնվող Համլետ Վահան Մալումյանին կառուցապատման իրավունքով պատկանող, համաձայն Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 20.0քմ մակերեսով հողամասը հողի կադաստրային արժեքով՝ 90480 (իննսուն հազար չորս հարյուր ութսուն) դրամով դրա վրա գտնվող 18.24քմ մակերեսով տաղավարը՝ համաձայն «Արմեն Ամիրբեկյան» ԱԶ-ի կողմից տրված հաշվետվության, 839000 (ութե հարյուր երեսունինը հազար) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Համլետ Վահան Մալումյանին:

2. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել տաղավարի և հողամասի առավաճառքի պայմանագրի կնքման գործընթացը:

Կողմ -0

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2018թ. սեպտեմբերի 14

ք. Վանաձոր

ՎԱՆԱՋՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Վանաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2020թ. հունիսի -ը: